ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 1176-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2016.11.25/85(1265) Հոդ.1140	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	18.11.2016
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	21.11.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	26.11.2016	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 նոյեմբերի 2016 թվականի N 1176-Ն

ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել պրոբացիայի պետական ծառայության տվյալների շտեմարանի մեջ ներառվող տեղեկությունների հավաքման և օգտագործման ընթացակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Կ. Կարապետյան**

2016 թ. նոյեմբերի 21
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թվականի
նոյեմբերի 18-ի N 1176-Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
Ի. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄԸ

1. Սույն կարգով սահմանվում են պրոբացիայի պետական ծառայության տվյալների շտեմարանի

մեջ ներառվող՝ «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պրոբացիայի շահառուների անձնական գործերի և պրոբացիայի պետական ծառայության գործունեության մասին տեղեկությունների հավաքման ու օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2. Պրոբացիայի պետական ծառայության տվյալների շտեմարանում (այսուհետ՝ շտեմարան)՝ «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանված տեղեկությունները հավաքվում ու պահվում են էլեկտրոնային և թղթային տարբերակներով: Թղթային տարբերակով ստացված ու հավաքված տեղեկությունները թվայնացվում և մուտքագրվում են շտեմարանում:

3. Շտեմարանի մեջ ներառվող տեղեկությունները հավաքվում են պրոբացիայի պետական ծառայության տարածքային մարմնի համապատասխան ծառայողի կողմից (այսուհետ՝ ծառայող):

4. Ծառայողը պրոբացիայի շահառուի անձնական գործը կազմելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում այն մուտքագրում է շտեմարանում:

5. Ծառայողը պրոբացիայի շահառուի մասին տեղեկություններ ստանալու նպատակով պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, հիմնարկներից և այլ կազմակերպություններից կատարված հարցումների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները շտեմարանում մուտքագրում է դրանք ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ծառայողի կողմից շտեմարանում մուտքագրվում են պրոբացիայի պետական ծառայության գործունեության մասին այն տեղեկությունները, որոնք վերաբերում են «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պրոբացիայի շահառուի հետ իրականացվող աշխատանքներին, միջոցառումներին և ծրագրերին:

7. Սույն ընթացակարգի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունները շտեմարանում մուտքագրվում են համապատասխան աշխատանքի, միջոցառման կամ ծրագրի մեկնարկի օրը:

8. Շտեմարանում պահվող տեղեկությունների և տվյալների փոփոխության կամ համալրման դեպքում ծառայողի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում լրացուցիչ կամ փոփոխված տեղեկություններն ու տվյալները մուտքագրվում են շտեմարանում:

II. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

9. Շտեմարանում պահվող տեղեկություններն օգտագործվում են ծառայողի կողմից՝ «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

10. Շտեմարանում պահվող տեղեկությունները «Պրոբացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավասու անձանց տրամադրվում են համապատասխան հարցումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

11. Շտեմարանում պահվող տեղեկությունները կարող են տրամադրվել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

12. Տեխնիկական հնարավորության դեպքում շտեմարանը կարող է համակցվել այլ իրավասու մարմինների համակարգերի հետ՝ շտեմարանում պահվող տեղեկություններն ինքնաշխատ եղանակով փոխանակելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Դ. Հարությունյան**